Արձանագրություն N 3

ՀՀ ՊԵԿ-ԲՄԾՁԲ-2023/5 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով բաց մրցույթ ընթացակարգով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար պահնորդական ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

9 հունվարի 2023թ.
ժամը 16:00

Մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ալբերտ Միրզոյանը, անդամներ՝ Արման Արամյանը, Հայկ Ջիվանյանը, Արթուր Հակոբյանը և քարտուղար՝ Սպարտակ Հարությունյանը: Բագրատ Գյուլխասյանը բացակայում էր նիստից:

Օրակարգ

Հայտերի ուսումնասիրման և գնահատման մասին

ՀՀ ՊԵԿ-ԲՄԾՁԲ-2023/5 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Ալբերտ Միրզոյանը նիստը հայտարարեց բացված և ներկայացրեց, որ «ԱՐ-ՄՈԲԻԼ» ՓԲԸ-ն և «Քինգ Մարշալ» ՍՊԸ-ն հրավերով սահմանված կարգով և ժամկետում շտկել են արձանագրված անհամապատասխանությունները, և ՀՀ ֆինանսների նախարարություն կատարված հարցմանը ի պատասխան հաստատվել է «Քինգ Մարշալ» ՍՊԸ-ի կողմից կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովման իսկությունը:

Հանձնաժողովը գնահատեց հայտերը, որի ընթացքում «ԱՐ-ՄՈԲԻԼ» ՓԲԸ և «Քինգ Մարշալ» ՍՊԸ-ի հայտերը ոչ գնային պայմաններով գնահատվեցին բավարար, իսկ «Հեկտոր» ՍՊԸ-ի հայտը՝ անբավարար:

Հիմք ընդունելով վերոգրյալը հանձնաժողովը որոշեց՝

- «Հեկտոր» ՍՊԸ-ի հայտը մերժել:

- ոչ գնային պայմաններով բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, «ԱՐ-ՄՈԲԻԼ» ՓԲԸ-ին ճանաչել որպես ընտրված մասնակից:

-անգործության ժամկետի ավատրտից հետո «ԱՐ-ՄՈԲԻԼ» ՓԲԸ-ին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ՝ պահանջելով ներկայացնելու որակավորման և պայմանագրերի ապահովումները՝ հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի

նախագահ _____ Ալբերտ Միրզոյան

անդամներ _____ Արման Արամյան

_____ Հայկ Ջիվանյան

_____ Արթուր Հակոբյան

քարտուղար _____ Սպարտակ Հարությունյան